

Հ Ր Ա Մ Ա Ն N 389-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«12» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2014 Թ.

ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

**ՆՈՏԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԹԱՐԳՄԱՆՁԻ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N 1917-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 12-րդ կետի «դ» ենթակետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 2-ի «Նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչին որակավորման վկայական տալու կարգը հաստատելու մասին» N 193 որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 4-րդ կետը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչի որակավորման ստուգման հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:



ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱԶՄ

ՆՈՏԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԹԱՐԳՄԱՆՉԻ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՎԻ

Արսեն ՄԿՐՏՉՅԱՆ	Հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության արդարադատու- թյան նախարարի առաջին տեղակալ
	Հանձնաժողովի անդամներ՝
Դիանա ՂԱԶԱՐՅԱՆ	Հայաստանի Հանրապետության արդարադատու- թյան նախարարության աշխատակազմի կազմակերպական-իրավական վարչության իրավաբանական անձանց պետական գրանցման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման և նոտարական համակարգի օրենսդրական ապահովման բաժնի պետ
Էմիլիա ԱԴՈՒՄՅԱՆ	«Հայաստանի Հանրապետության արդարադատու- թյան նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի իրավական ակտերի թարգմանության բաժնի պետ
Մհեր ՇԱՐՈՅԱՆ	«Հայաստանի Հանրապետության արդարադատու- թյան նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի միջազգային համագործակցու- թյանն առնչվող թարգմանությունների բաժնի պետ
Արման ԽԱԶԱՏՐՅԱՆ	«Ժողովրդավարություն և իրավունքի կենտրոն» ՀԿ (համաձայնությամբ)
Աննա ՊԱՊՈՅԱՆ	«Հայաստանի խուլերի միավորում» ՀԿ (համաձայնությամբ)
Եվա ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	Ժեստերի լեզվի թարգմանիչ (համաձայնությամբ)

Իռեն ԳՂՈՂՅԱՆ

Հանձնաժողովի քարտուղար,
Հայաստանի Հանրապետության արդարադատու-
թյան նախարարության աշխատակազմի
կազմակերպական-իրավական վարչության
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի,
քաղաքացիական կացության ակտերի գրանցման
և նոտարական համակարգի օրենսդրական
ապահովման բաժնի առաջին կարգի մասնագետ: